**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ**
**ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 21-Ա

Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով համայնքի ավագանին

Որոշում է՝

Հաստատել նիստի օրակարգը

1.Ն.Ծաղկավան համայնքի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաք. անակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերըհաստատելու մասին

2.Ն.Ծաղկավան համայնքում2018թ տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստ ատելու մասին

3.Ն.Ծաղկավան համայնքի սեփականության ամենամյա փաստաթղթերը հաստատելու մասին

4.Դիմումների քննարկում

5.Ն.Ծաղկավան համայնքի վարչական սահմաններում գտնվող 11-037-0019-0056 ծածկագրով 17.1քմ մակերեսով առկա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողատեսքի գործառնական նշանակությունը փոխելու մասին:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՄԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

2. ԱՄԻՐՅԱՆ ՄՀԵՐ

3. ՅՈՒԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95,
nerqintsaghkavan.tavush@mta.go

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 22-Ա

### Ն.ԾԱՂԿԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ մարտի 10-ի թիվ 234-Ն որոշումը և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 28-րդ կետով , <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Ն.Ծաղկավանի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ

2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ

3. ՅՈՒԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ

Հավելված

Ն.Ծաղկավան համայնքի ավագանու

24/11/2017թ 22-Ա որոշման

Ն.Ծաղկավանի համայնքապետարանի

Աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը

և պաշտոնային դրույքաչափերը

1 Աշխատակիցների թվաքանակը-6

2.Աշխատակիցների հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /ՀՀ դրամ /

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափերը |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 195.000 |

Հայեցողական պաշտոններ

| | | | |
|---|---|---|---|
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 107.000 |

Համայնքային ծառայողներ

| | | | |
|---|---|---|---|
| 3 | Աշխատակազմի քարտուղար | 1 | 112.000 |
| 4 | Առաջատար մասնագետ-ֆինանսիստ | 1 | 109.000 |
| 5 | 2-րդ կարգի մասնագետ | 1 | 82.903 |

Տեխ.սպասարկման անձնակազմ

| | | | |
|---|---|---|---|
| 6 | Հավաքարար | 1 | 72.752 |

Ն.Ծաղկավան համայնքի ղեկավար /Ն.Աթաբեկյան /

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 23-Ն

## Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018Թ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 18-րդ կետով, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ, 8-րդ, 9-րդ , 10-րդ և 11-րդ հոդվածների պահանջներով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, համայնքի ավագանին

Որոշում՝

1.Սահմանել Ն.Ծաղկավան համայնքի վարչական տարածքում 2018թ տեղական տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1)Ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար 1500/մեկ հազար հինգ հարյուր/դրամ:

2)Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքումյուրաքանչյուրեռամսյակիհամար 1500/մեկհազարհինգհարյուր/դրամ:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրը:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ
2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ
3. ՅՈՒԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 24-Ա

## Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>>Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 32-րդ կետով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Ն.Ծաղկավան համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ
2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ
3. ՅՈՒԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
# ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 25-Ա

## ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համայնքի ղեկավարին են դիմել համայնքի մի խումբ բնակիչներ կենտրոնական ճանապարհի մոտ գտնվող մեծ վտանգավորություն առաջացնող մոտ 20մ բարձրությամբ եղևնու ծառը կտրելու խնդրանքով,քանի որ նշված ծառը նույնիսկ փոքր քամու ժամանակ ճոճվում է և վտանգ է առաջացնում մոտ հարևանության գտնվող տներին,գազի խողովակաշարին և էլեկտրական գծերին ,ուստի ծառը շտապ պետք է կտրել:

Քննարկվել է ՀՀ վարչապետին հասցեագրված Ն.Ծաղկավան համայնքի բնակիչ Ջուլիետա Աթաբեկյանի դիմումը խմելու ջուր ունենալու խնդրանքով:Քանի որ ինքը կարիքավոր չի համարվել,միայնակ չէ ունի 4 զավակ,Երևան քաղաքում բնակելի տուն կարող է օգտվել խմելու ջրի ընդհանուր մագիստրալից:

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի պահանջներով համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաշվի առնելով ծառի վտանգավորությունը բնակիչների համար, ծառի հատումը համարել հրատապ խնդիր:

2.Ն.Ծաղկավան համայնքի բնակիչ Ջուլիետա Աթաբեկյանին խիստ կարիքավոր չհամարել:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ
2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ
3. ՅՈՒԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ**
**ԾԱՂԿԱՎԱՆ (ԻՋԵՎԱՆԻ ՇՐՋ.) ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ներքին Ծաղկավան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, գ.Ներքին Ծաղկավան, (093) 55-54-95, nerqintsaghkavan.tavush@mta.go

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2017թվականի N 26-Ա

## Ն.ԾԱՂԿԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 11-037-0019-0056 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ 17.1ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՌԿԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011թ դեկտեմբեր 29-ի <<Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաներ կազմելու կարգը հաստատելու մասին >> 1918-Ն որոշմամբ սահմանված կարգով և հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետարանի համաձայնությունը համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Ն.Ծաղկավան համայնքի վարչական սահմաններում գտնվող 11-037-0019-0056 կադաստրային ծածկագրով 17.1քմ մակերեսով առկա բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողատեսքի գործառնական նշանակությունը փոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից:

Կողմ -3 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՍԻՐՅԱՆ ԷԴԳԱՐ
2. ԱՍԻՐՅԱՆ ՄՀԵՐ
3. ՅՈԼՉՅԱՆ ԴԱՎԻԹ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱԻՐԻ ԱԹԱԲԵԿՅԱՆ**